



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
ինֆորմատիկայի ֆակուլտետի  
խորհրդի թիվ 3 նիստում

խորհրդի նախագահ՝

Գ. Դեմիրխանյան

" 16 " դեկտեմբեր 2020 թ.

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԵՐԵՎԱՆ 2020

## I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:

- Հաշվետու ժամանակահատվածում Ֆակուլտետում իրականացվել են հետևյալ միջոցառումները.
1. Գնահատվել և վերանայվել են մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ),
  2. Ընդլայնվել է ուսուցման դասավանդման գործընթացում IT տեխնոլոգիաների կիրառումը,
  3. Ապահովվել է դասախոսների մասնագիտական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների առկայությունը,
  4. Իրականացվել է պրակտիկաների անցկացման բարելավված գործընթացի քարտեզագրումը,
  5. Կիրառության մեջ է դրվել ինքնագնահատման համակարգը, կիսամյակի կտրվածքով իրականացվել են կրթական գործունեության մշտադիտարկում, պարբերական դասալսումներ, քննարկվել են դասավանդման մեթոդների արդյունավետությունը,
  6. Ապահովվել է Ֆակուլտետի բոլոր դասախոսների և ուսանողների միասնականությունը սոցիալական մեդիայում,
  7. Ստեղծվել են համապատասխան պայմաններ դասախոսների մասնակցության համար միջազգային և հանրապետական գիտական ծրագրերին ու մրցույթներին,
  8. Շարունակվել է համագործակցությունը հանրապետության և արտերկրների գիտահետազոտական հիմնարկների հետ,
  9. Խթանվել է դասախոսների կողմից ուսումնագիտական և գիտամեթոդական ուսումնական կյուբերի (ծեռնարկներ, դասագրքեր, մենագրություններ և այլն) ստեղծումը,
  10. Խթանվել է ամբիոններում գիտական կադրերի պատրաստումը,
  11. Ապահովվել է դասախոսական կազմի մասնակցությունը Ֆակուլտետի կառավորման, որոշումների ընդունման գործընթացներում, Ֆակուլտետի և ամբիոնների գործունեության թափանցիկությունը,
  12. Ապահովվել է դասախոսական կազմի մասնակցությունը Ֆակուլտետում իրականացվող ծրագրերին,
  13. Անցկացվել է 11 –րդ և 12-րդ դասարանների աշակերտների օլիմպիադա մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից, որին մասնակցել են տարբեր դպրոցների շուրջ 60 աշակերտ,
  14. Անցկացվել են մասնագիտական ամենամսյա սեմինարներ և մեկ միջազգային կոնֆերանս «Մաթեմատիկական կրթություն» խորագրով՝ թվով 7-րդը,
  15. Ուսանողները ներգրավվել են Ֆակուլտետում իրականացվող գիտական հետազոտությունների գործընթացների մեջ, կոնֆերանսների, սեմինարների և այլ գիտաուսումնական ու գիտամեթոդական աշխատանքներում,
  16. Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել շրջանավարտների զբաղվածության խնդիրը՝ ուղղորդելով նրանց ուսուցիչների թափուր տեղեր ունեցող հանրակրթական հաստատություններ,
  17. Ֆակուլտետում ստեղծված է SS-ով հագեցած ժամանակակից ուսումնական միջավայրը,
  18. Լայնորեն կիրառվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը,
  19. Ֆակուլտետի կազմում գործող լաբորատորիաները և համակարգչային լսարանները հագեցված են համապատասխան տեխնիկական միջոցներով, համալրված է մասնագիտական գրականությամբ և ուսումնական նյութերով էլեկտրոնային գրադարանը,
  20. Համալսարանի կայք-էջը պարբերաբար թարմացվում է Ֆակուլտետի էջը,
  21. Ստեղծված է և ինտենսիվ գործում է Ֆակուլտետի ֆեյսբուկյան էջը:

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել Ֆակուլտետի հաշվետու տարում Ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:

Ֆակուլտետում գործում են չորս մասնագիտական թողարկող ամբիոններ՝ 1. Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի, 2. Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի, 3. տեխնոլոգիական կրթության և 4. ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի: Բոլոր ամբիոնները ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, իսկ ուսումնահետազոտական լաբորատորիաները կահավորված են ժամանակակից տեխնիկական միջոցներով ու

սարքավորումներով, ինչը թույլ է տալիս իրականացնել մագիստրոսական թեզերի և բակալավրիական ավարտական աշխատանքների թեմաների հետ առնչվող հետազոտություններ: Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված կրթական գործընթացի իրականացումը և ունի կրթական նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ:

Ֆակուլտետում գործող խորհուրդը և հանձնախմբերի (որակի հանձնախումբ, մեթոդական հանձնախումբ) աշխատանքները ուսումնական տարվա կտրվածքով պլանավորվում են՝ համապատասխան ֆակուլտետի նպատակների և խնդիրների, կազմվում են աշխատանքների իրականացման ժամանակացույց: Սակայն հայտնի պատճառներով (համավարակ, պատերազմ) նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ չեն իրականացվել:

Ֆակուլտետի խորհրդում ներգրավված են տարբեր մասնագիտություններն ու կրթական ծրագրերը ներկայացնող ութ ուսանողներ, դպրոցների տնօրեններ:

### III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:

Հաշվետու ժամանակաշրջանում լրամշակվել են բակալավրիական ու մագիստրոսական կրթական ծրագրերը՝ առավելագույնս համահունչ դարձնելով դրանք մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին: Մասնավորապես կոռեկցվել են հեռակա և առկա ուսուցման ուսումնական ծրագրերը, ճշկրտվել է գնահատման համակարգը, հստակեցվել են առարկայական նկարագրերը, լիարժեք կիրառել է կրեդիտային համակարգի հնարավորությունները՝ կապված զուգահեռ երկրորդ մասնագիտության ուսումնական գործընթացի կազմակերպման հետ:

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետում կիրառում են դասավանդման բոլոր եղանակները՝ նախապատվություն տալով ուսուցման ինտերակտիվ մեթոդին: Ուսանողակենտրոն ուսուցումն իրականացման ուղղությամբ ֆակուլտետն իրականացրել է Classroom էլեկտրոնային կրթական հարթակում ակտիվ գործունեություն, ուսանողներին տրամադրելով ինչպես մասնագիտական ուսումնական նյութեր, այնպես էլ հավելյալ տեղեկատվություն՝ կապված ուսումնասիրվող առարկայի հետ: Ուսուցման այս եղանակը նպաստում է նաև հայերեն մասնագիտական գրականության ստեղծմանը, ինչը խիստ կարևոր է մեր իրականության համար: Ֆակուլտետը՝ կապված համաճարաքային իրավիճակի հետ սեպտեմբերին մասնակիորեն, իսկ հոկտեմբերին ամբողջությամբ անցել է առցանց ուսուցման:

Ուսանողների գնահատման համակարգում գործում է 100 միավորնաց սանդղակը, որում որպես բաղադրիչներ ներառված են.

Միջանկյալ ստուգմամբ ավարտվող դասընթացներ՝

1. Միջանկյալ ստուգում 1 40%
2. Միջանկյալ ստուգում 2 40%
3. Հաճախում 5%
4. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք 15%

Ամփոփիչ ստուգմամբ ավարտվող դասընթացներ՝

1. Միջանկյալ ստուգում 1 25%
2. Միջանկյալ ստուգում 2 25%
3. Հաճախում 5%
4. Ընթացիկ ստուգում և գնահատվող էլեկտրոնային առաջադրանք 15%

5. Ամփոփիչ ստուգում	30%
Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությամբ, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:	
<p>2020 թ հունվարի 6 –ից մարտի 22-ը մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս Սարինա Գասպարյանը ԵՐԱՉՄՈՒՄ<sup>+</sup> ծրագրի շրջանակներում մասնագիտական ուսումնառությունն անցկացրել է Մեծ Բրիտանիայի Կիլեի համալսարանում, դրական արդյունքներով հանձնել է ծրագրով նախատեսված քննությունները և հավաքել համապատասխան կրեդիտները:</p> <p>Նույն թվականի մարտին ԵՐԱՉՄՈՒՄ<sup>+</sup> ծրագրի շրջանակներում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով Մեծ Բրիտանիայի Կիլեի համալսարան պիտի մեկնել Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Աշոտ Գալստյանը, սակայն համավարաքի պատճառով գործուղումը ընթացվեց:</p> <p>Համավարաքի պատճառով 2021 թ տեղափոխվեցին նաև Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լ. Ղուլղազարյանի և Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Ս. Ասատրյանի՝ դասախոսների փոխանակման ծրագրով ԵՐԱՉՄՈՒՄ<sup>+</sup> -ի շրջանակներում 2020թ նախատեսված այցը Կիլեի համալսարան, Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Է. Կոկանյանի գիտական գործուղումը Ֆրանսիայի Լորենի համալսարան, ՄՖԻ ֆակուլտետի դեկան Գ. Դեմիրխանյանի գիտական գործուղումը Օպտիկայի ազգային ինստիտուտ (Ֆլորենցիա, Իտալիա): Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Ա. Մինասյանի գործուղումը Բելարուս՝ մասնակցելու ԱՊՄ երիտասարդ գիտնականների երրորդ ֆորումին:</p>	

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:			
Բակալավրի	առկա	286	
	հեռակա	284	
Մագիստրոսի	առկա	102	
	հեռակա	52	
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1		Առկա՝ 17	
2		Հեռակա՝ 28	
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Սփյուռք (Վրաստան)	Առկա՝ 6	
2	Հեռակա բաժին	Առկա՝ 1	
3	Այլ բուհերից	Առկա՝ 4, հեռակա՝ 3	
4	շարունակական	հեռակա՝ 8	
5	առկայից	հեռակա՝ 10	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	5.2%	38
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	4.1%	30
Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:			
<p><i>Ֆակուլտետում իրականացվում են մի քանի միջոցառումներ՝ ուղղված ուսանողների հավաքագրման, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ներդրումը հավաքագրման արդյունավետության մեջ.</i></p> <p><i>1. Անմիջական կապը պոստենցիալ դիմորդների հետ իրականացվում է հետևյալ եղանակներով</i></p>			

- Ամբիոնների դասախոսների և ֆակուլտետի աշխատակիցների կողմից իրականացվել են դպրոցների և այլ հանրակրթական հաստատությունների, այդ թվում՝ տարբեր շրջաններում գործող, պարբերական այցելություններ:
  - Կազմակերպվել են աշակերտների այցելություններ ֆակուլտետ՝ օգտագործելով նաև մանկավարժական պրակտիկա անցնող ուսանողների ներուժը:
  - Կնքվել է լայնածավալ համագործակցության պայմանագիր Երևանի թիվ 2 ավագ դպրոցի հետ, որի շրջանակում անցկացվել են փոխայցելուցյուններ, բաց դաս, լաբորատոր պարապմունքներ և այլն:
  - Ֆակուլտետում գործում է «ռոբոտոտեխնիկայի» և «WEB ծրագրավորման» խմբակներ, որտեղ ներգրաված են տարբեր դպրոցների աշակերտներ:
  - Կազմակերպվել և անցկացվել են մաթեմատիկա, ֆիզիկա և ինժոնրմատիկա առարկաներից մրցույթ-օլիմպիադա 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտների շրջանակում:
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ
- Ինտենսիվ գործում են Facebook-ում ստեղծված էջերը՝ «Ի՞նչ մասնագիտություն ընտրել» և «Յեռավար ֆիզիկամաթեմատիկական անվճար դպրոց», որոնց անդամակցում են շուրջ 600 շահառու:
  - Ստեղծվել է Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինժոնրմատիկայի Facebook-ան էջը:
  - Ստեղծվել է Մաթեմատիկական կրթություն Facebook-ան էջը:
  - ՀՊՄՀ լրատվական կենտրոնի կողմից նկարահանվել են «Հաջողության բանաձև» խորագրով հոլովակներ, որոնք ներկայացնում են ֆակուլտետի մասնագիտությունները: Այս հոլովակները ցուցադրվել են հեռուստատեսությամբ, տեղադրված են սոցալական ցանցերում և ՀՊՄՀ կայք-էջում:
- Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը գործուն մասնակցություն է ունեցել ՀՊՄՀ ուսխորհրդի կողմից իրականացված քարոզարշավին՝ նվիրված ուսանողների հավաքագրման:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Ուսանողը հեռացվում է համալսարանից՝ անբավարար առաջադիմության, ուսման վարձը սահմանված ժամանակահատվածում չվճարելու և անհարգելի սիստեմատիկ բացակայությունների դեպքում: Ուսանողը հավանդության, հանրապետությունից բացակայելու կամ այլ պատճառով, իր դիմումի համաձայն, կարող է ընդհատել իր ուսումնառության ընթացքը՝ հետագայում վերականգնվելու պայմանով:

Ուսման ընթացքը ընթատվում է նաև Ազգային բանակ մեկնելու պատճառով և վերականգնվում է Ազգային բանակից զորացրվելուց հետո՝ ուսանողի դիմումի համաձայն:

Հաշտուռ տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		3
Մագիստրոս		12
Ընդհանուր		15
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		
2		
3		
4		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1		
2		
3		
4		

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:

*Ֆակուլտետում դասավանդում են բարձր մասնագիտական կարողություններ և փորձառություն ունեցող դասախոսներ. հիմնական հաստիքով 51 (այդ թվում՝ գիտությունների 10 դոկտոր) և հրավիրված 18 (այդ թվում՝ գիտությունների 8 դոկտոր և ԳԱԱ –ի 2 ակադեմիկոս ու 1 թղթակից անդամ): Դասախոսների թվաքանակի բաշխումը ըստ ամբիոնների բերված է ստորև:*

1. Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	Կլորոհ	մսրիսոր	Պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ.
Հաստիքային	7	5	6	7	6	1	4	18
Համատեղող	0	3	3	2	2	0	0	5
Ժամավճարային	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	7	8	9	9	8	1	4	23
<i>ՊԴԱ-ի միջին տարիք</i>		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70-ից բարձր	
62		0	4	2	0	7	10	23

2. Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	Կլորոհ	մսրիսոր	Պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	Ասիստենտ	Դասախոս	Ընդ.-նր
Հաստիքային	2	1	3	5	4	0	1	7
Համատեղող	1	3	3	1	1	0	0	4
Ժամավճարային	0	1	1	0	0	0	0	1
Ընդամենը	5	7	10	6	4	1	1	12
<i>ՊԴԱ-ի միջին տարիք</i>		Մինչև 3	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
57		-	1	4	1	3	3	12

3. Տեխնոլոգիական կրթության ամբիոն

Անվանում	Կլորոհ	մսրիսոր	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	Դասախոս	Ընդ.-նր
Հաստիքային	2	1	2	3	5	0	-	6
Համատեղող	-	-	-	1	1	-	-	1
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	3	1	2	4	6	-	-	7
<i>ՊԴԱ-ի միջին տարիք</i>		Մինչև 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
61		-	1	0	2	2	2	7

4. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	Գրություն	Դրվածք	Այլընտրանքային	Գիտ.թեմեր	Դրոշմ	Այլընտրանքային	Դասակարգում	Ընդամենը
Հաստիքային	3	1	1	12	9	3	0	14
Համատեղող	0	1	1	2	1	0	0	3
Ժամավճարային	0	1	1	0	0	0	0	1
Ընդամենը	3	3	3	14	10	3	0	18
ՊԴԱ-ի միջին տարիք	Մինչ և 31	31-40	41-50	51-60	61-70	70 բարձր		
51	-	4	5	4	4	1		18

Ֆակուլտետի դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման իրականացվել է.

1. Ամբիոնների կողմից իրականացված պլանային դասալսումների միջոցով (համապատասխան արձանագրությունները պահվում են ամբիոններում):
2. Ուսանողների շրջանակներում անցկացված ծայրային հարցումների միջոցով, որոնց արդյունքում որոշվել է դասախոսի վարկանշային ցուցիչը կազմավորող հայտանշերից մեկը:
3. Դեկանի և նրա տեղակալների կողմից ուսանողների հետ պարբերաբար անցկացվող զրույցների և քննարկումների միջոցով:

Արդյունքները քննարկվել են համապատասխան ամբիոնների նիստերում և ֆակուլտետի խորհրդում:

#### VI. ՐԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի ամբիոններում և գիտական լաբորատորիայում ինտենսիվորեն իրականացվում են գիտական, գիտամեթոդական հետազոտական աշխատանքներ: Ֆակուլտետում իրականացվում են ՀՀ Գիտության կոմիտեի կողմից բյուջետային ֆինանսավորմամբ երկու թեմաներ (դեկավարներ՝ Յ. Միքայելյան, Է. Կոկանյան) և մեկ թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական թեմա (դեկ. Է. Կոկանյան), ինչպես նաև Հայ-Իտալական գիտատեխնիկական համագործակցության շրջանակներում Գիտական թեմա (դեկ. Գ. Դեմիրխանյան):

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրատարակումների թիվ

Հ/Հ	Հեղինակ (ներ) ազգանունը, անունը	Վերնագիրը	Պարբերականը (և՛ել պարբերական-ի ամբողջական անվանումը)	Հատոր	Համար	Էջեր	Տպագրության վայրը	Տարին
1	2	3	4	5	6	7	8	9
1	Yu.Movsisyan, V.Pambuccian	The geometry of point reflections and quasigroups	Results in Mathematics	75	4	12 էջ	Springer	2020
2	Goharik Petrosyan	Some Questions about the Possibilities of Modeling Petri Nets	European Journal of Advances in	Volume 6	Issue	1-11	Choti Brahmpu	2020

		and their Extension	Engineering and Technology		3		ri	
3	Аветисян А.М., Маркосян А. Х., Петросян Г.Р.	Исследование Взаимосвязи Оценки Эффективности Водохранилищ и Возникновения Наведенной Сейсмичности	Москва ФГБОУ ВО «РЭУ им. Г. В. Плеханова»	ИЗ2		23- 33	Москва	2020
4	Шахбазян Лилит Гамлетовна Петросян Гоарик Размиковна	О Применении Подходов Визуализации При Подготовки Преподавателей Информационных Технологий в Высшей Школе	Москва ФГБОУ ВО «РЭУ им. Г. В. Плеханова»	ИЗ2		187- 196	Москва	2020
5	Մարինա Փոթիկյան	Արտադրանքի պահանջարկի անհավասարաչափ բաշխվածության և անորոշու-թյան պայմաններում առա-ջարկի տնտեսամաթեմա- տիկական գնահատումը	Այլ ընտրանք գիտ. հանդես		#3	260- 267	Երևան	2020
6	Մարինա Փոթիկյան	Արտադրանքի պահանջարկի անհավասարաչափ բաշխվածության և անորոշության պայմաններում առաջարկի գնահատման տարբերակային համեմատության եղանակ	Այլ ընտրանք գիտ. հանդես		#1	400- 406	Երևան	2020
7	Hovhannisyan A.A, Grigoryan G.K, Nadaryan A.G Grigoryan N.H	On Problems of Synthesis of Mono- dispersed Latexes in the Static Heterogeneous Monomer-Water System	Evolution in Polymer Technology Journal	Volu me 3	Iss ue 1	p.27 -29		2020

8	A.Hovhannisyan, G.K. Grigoryan, N.G. Grigoryan, A.G. Nadaryan, M. Khaddaj3, I. A. Gritskova	Peculiarities of Polymerization of Vinyl Acetate and Styrene in Static Heterogeneous Monomer: Water System in the Absence of Emulsifier	Chemical Engineering of Polymers Science and Technology of Polymers and Advanced Materials	chap ter 14		p.18 1- 189	Apple Academic Press , USA	2020
9	А. Саградян, С. Агбалян, А. Мартиросян, Н. Ордян, Х. Погосян	Изучение возможностей оптимизации технологии изготовления алмазных инструментов на металлической связке.	Різання та інструменти в технологічних системах. (Cutting & Tools in Technological System) ISSN 2078-7405 , doi: 10.20998/2078- 7405.2020.92.14 <a href="http://rits.khpi.edu.ua/article/view/2078-7405.2020.92.14/203325">http://rits.khpi.edu. ua/article/view/207 8- 7405.2020.92.14/ 203325</a>		№ 92	136- 143	Խարկով, Ուկրաինա	2020
10	Гулгазарян Г.Р., Гулгазарян Л.Г.	Приближенные дисперсионные уравнения для тонкой упругой ортотропной незамкнутой цилиндрической оболочки со свободными краями	Ученые записки АГПУ им. Х. Абовяна	Ереван		С. 33- 49	ռուսերեն	2019
11	С.Г. Агбалян, Н.А. Ордян, А.М. Мартиросян, А.С. Агбалян, Х.В. Погосян	Исследование меха- низма структурообра- зования в переходном слое металлоалмазных композиционных ма- териалов с металли- зированными алмаз- ными зернами, полу- ченных жидкофазным свободным спеканием	Вестник НИУА. Серия Металлургия, материаловедение, недропользование		№ 1,		Ереван	2020
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրատարակումների ցանկը								
Հ/Հ	Հեղինակ (ներ) ազգանունը, անունը	Վերնագիրը	Հրատարակչությունը	Հրատարակչության նվայրը	Ցիտավորում ընտրված ար.	Էջերի քանակը	Լեզուն	Տարին
1	A.M. Ishkhanyan , G.G.	Comment on the paper "Third-harmonic generation	Superlattices and Microstructures,	Netherl ands	Scop us	6	English	2020

	Demirkhanyan	investigated by a short-range bottomless exponential potential well" by M. Hu, K. Guo, Q. Yu, Z. Zhang [Superlattices and Microstructures, 122 (2018) 538–547]	144, p. 106567 Elsevier Ltd						
2	G. G. Demirkhanyana, R. B. Kostanyan	Spectroscopic Capabilities of LaF3:Er3+ Crystals for MIR Lasers Cascade Operation	J. of Contemp. Phys. (Armenian Academy of Sciences), 2020, V. 55, N 4, pp. 305–312. Springer	Yerevan	Scopus	8	English	2020	
3	K.L. Hovhannesyan, M.V. Derdzyan, A.V. Yeganyan, V.E. Kisel, A.S. Rudenkov, N.V. Kuleshov, A.G. Petrosyan	Absorption and Emitting Properties of GGG:Ce Single Crystals in the Range of 4f-5d Transitions of Ce 3+ Ions	J. Contemporary Physics(Armenian Academy of Sciences)	Erevan, Armenia	Scopus	6	Անգլերեն	2020	
4	А.В. Еганян, К.Л. Ованесян, Н.Коканян, М.Айллери, Э.П. Коканян	Теплопроводность графена при комнатных температурах и его связь с тепловым расширением	Известия НАН РА	Ереван, Армения	Scopus	6	Ռուսերեն	2020	
5	Sergey M. Kostritskii, Yuri N. Korkishko, Vyacheslav A. Fedorov, Oleg G. Sevostyanov, Irina M. Chirkova, Edvard Kokanyan & Michel Aillerie	Phase composition of channel proton-exchanged waveguides in different near-congruent LiNbO3	Ferroelectrics Letters Section	United Kingdom	Scopus	6	անգլերեն	2020	
6	Sergey Kostritskii, Michel Aillerie, Edvard Kokanyan & Oleg Sevostyanov	Parameters of nonlinear scattering evaluated by open-aperture Z-scan technique in photorefractive LiNbO3 crystals	<u>Optical and Quantum Electronics</u>	The Netherlands	Scopus		անգլերեն	2020	
7	Haroutunian S.	Canonical integrals of admissible differential geometric structures on submanifolds	Atti della Accademia Peloritana, Classe di Fisiche, Matematiche e Naturali, Vol.98,	Italy	Scopus	18	անգլերեն	2020	

			no 2					
8	Ghughazaryan G.R., Ghulghazaryan L.G.	Free Vibrations of Thin Elastic Orthotropic Cantilever Cylindrical Panel	Sprinter Lecture Notes in Mechanical Engineering,	Switzerland	Scopus	16	English	2020
9	Микаелян Г. С.	Эстетика математического образования и психическое явление внимания	Вісник Черкаського університету серія педагогічні науки, Выпуск № 1 С. 67-75	Украина	РИЦ		ռուսերէն	2020
10	Микаелян Г. С.	Эстетические эмоции в процессе обучения математике	БГУ Вісник Черкаського університету серія педагогічні науки, Выпуск № 3 С. 176-187	Белорусия	РИЦ		ռուսերէն	2020
11	Микаелян Г. С.	О ценности математического образования	БГУ Матэматыка. Науч.метод. журнал БГУ, 2 С. 51-57	Белорусия	РИЦ		ռուսերէն	2020
12	Гулгазарян Г.Р.	Свободные колебания тонкой упругой ортотропной цилиндрической панели с шарнирно-закрепленным торцом	Известия НАН РА Механика	Ереван		18	ռուսերէն	2020
13	Арабаджян Л. Г.	О нетривиальной разрешимости кратного однородного уравнения Винера-Хопфа и об уравнении Пайерлса	Springer Теоретическая и математическая физика	Москва	Scopus	C.14 2-150	ռուսերէն և անգլերէն	2020
<b>ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրատարակումների ցանկը</b>								
Հ/Հ	Հեղինակ (ներ) ազգանունը, անունը	Վերնագիրը	Հրատարակչությունը	Հրատարակչության վայրը	Ցիտվող շտեմար.	Էջերի քանակը	Լեզուն	Տարին
1	Гулгазарян Г.Р., Гулгазарян Л.Г.	Приближенные дисперсионные уравнения для тонкой упругой ортотропной	Ученые записки АГПУ им. Х. Абовяна	Ереван	-	С. 33-49	ռուսերէն	2020

		незамкнутой цилиндрической оболочки со свободными краями						
2	G. G. Demirkhanyana, R. B. Kostanyan	Spectroscopic Capabilities of LaF3:Er3+ Crystals for MIR Lasers Cascade Operation	J. of Contemp. Phys. (Armenian Academy of Sciences), 2020, V. 55, N 4, pp. 305–312. Springer	Yerevan	Scopus	8	English	2020
3	K.L. Hovhannesian, M.V. Derdzyan, A.V. Yeganyan, V.E. Kisel, A.S. Rudenkov, N.V. Kuleshov, A.G. Petrosyan	Absorption and Emitting Properties of GGG:Ce Single Crystals in the Range of 4f-5d Transitions of Ce 3+ Ions	J. Contemporary Physics(Armenian Academy of Sciences)	Erevan, Armenia	Scopus	6	Անգլերեն	2020
4	A.В. Еганян, К.Л. Ованесян, Н.Коканян, М.Айллери, Э.П. Коканян	Теплопроводность графена при комнатных температурах и его связь с тепловым расширением	Известия НАН РА	Ереван, Армения	Scopus	6	Ռուսերեն	2020
5	Գուլգազարյան Գ.Ր.	Свободные колебания тонкой упругой ортотропной цилиндрической панели с шарнирно-закрепленным торцом	Известия НАН РА Механика	Ереван		18	ռուսերեն	2020

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

*Հաշվետու տարում ֆակուլտետում իրականացվող հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստել են.*

- 1. Ամբիոնների աշխատակիցների կողմից գիտական հոդվածների հրատարակումն անգլերենով հեղինակավոր ամսագրերում (դրանց թվաքանակը բերված է համապատասխան աղյուսակում):*
- 2. «Մաթեմատիկական կրթություն» 8-րդ միջազգային գիտաժողովը*
- 3. Օտարերկյա գիտնականների հետ համահեղինակությամբ տպագրված գիտական աշխատանքները (դրանց հղումները բերված են համապատասխան աղյուսակում):*
- 4. Մասնակցությունն արտերկրներում կազմակերպվող և անցկացվող միջազգային գիտաժողովներին:*
- 5. Համատեղ միջազգային համագործակցությամբ (Ռուսաստան, Ֆրանսիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա) գիտական ծրագրերի իրականացում:*

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

Ֆակուլտետում իրականացվող հետազոտական գործունեությունը տարեց տարի ավելի սերտորեն է փոխկապակցվում ուսումնական գործընթացի հետ: Այդ մասին են վկայում ուսանողների ներգրավվածությամբ կատարվող հետազոտական աշխատանքների քանակը, որոնց արդյունքները տպագրվում են գիտական ամսագրերում, մի շարք մագիստրական թեզերի թեմաները մասն են կազմում համապատասխան ամբիոններում կատարվող գիտական, ուսումնագիտական և ուսումնամեթոդական աշխատանքների: Այս գորընթացին մեծապես նպաստում են.

- Մագիստրանտների և բարձր կուրսերի ուսանողների մասնակցությամբ ամբիոններում անցկացվող սեմինարները,
- «Մաթեմատիկական կրթություն» ամենամյա միջազգային գիտաժողովը, որին ակտիվորեն մասնակցում են մաթեմատիկա մասնագիտության մագիստրանտները:

**VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:

Ֆակուլտետի կազմում գործում են 10 ուսումնական լաբորատորիա (այդ թվում՝ ռոբոտոտեխնիկայի լաբորատորիա, որտեղ տեղադրված է 3D տպիչ), 8 համակարգչային լսարան, աստղագիտության 1 ուսումնական կաբինետ և աստղադիտարան, 1 համակարգչային լսարան-պորտալ և 2 արհեստանոց: Ֆակուլտետի տրամադրության տակ գտնվում են 13 լսարաններ, որոնցից չորսում տեղադրված են համակարգիչներ և պրոյեկտորներ: Վերջիններս տեղադրված են նաև 7 լաբորատորիաներում և լսարան-պորտալում, 2 լաբորատորիաներում տեղադրված են հեռուստացույցեր:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար լաբորատորիաների հագեցվածությունը բավարար, սակայն, հաշվի առնելով տեխնիկական միջոցների զարգացման տեմպերը, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել լաբորատոր սարքավորումների և տեխնիկական միջոցների արդիականացում:

**VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:

- Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում իրականացվել են հետևյալ միջոցառումները.
1. Կազմակերպվել են աշակերտների այցելություններ ֆակուլտետ, որի ընթացքում աշակերտներն այցելել են ՀՊՄԹ թանգարանը, աստղադիտարանը, կազմակերպվել են հանդիպումներ ամբիոնների աշխատակիցների հետ և այլն:
  2. Ֆակուլտետում գործում է «ռոբոտոտեխնիկայի» (ղեկ. տ.գ.թ. Ն. Օրոյան) և «WEB ծրագրավորման» (ղեկ. ֆ.մ.գ.թ. Վ. Խառատյան) խմբակներ, որտեղ ներգրավված են տարբեր դպրոցների աշակերտներ:
  3. Facebook-ում ստեղծվել են «Ի՞նչ մասնագիտություն ընտրել» և «Հեռավար ֆիզիկամաթեմատիկական անվճար դպրոց» խմբերը և «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» որոնց անդամակցում են շուրջ 500 շահառու, այդ թվում՝ ուսուցիչներ, դասախոսներ, աշակերտներ:
  4. ՀՊՄԹ լրատվական կենտրոնի կողմից նկարահանվել և Youtube-ում տեղադրվել է ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎ տեսահոլովակը՝ նվիրված մաթեմատիկական կրթության:
  5. Ֆակուլտետի երկու աշխատակիցներ՝ Ն. Օրոյանը և Ա. Դանելյանը ՀՀ ԳԿՍՍ Նախարարության հանձնախմբերի կազմում մասնակցել են ՏԵԽՆՈԼՈԳԻԱ և ՖԻԶԻԿԱ առարկաների հանրակրթական չափորոշիչների լրամշակման գործին:

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:

1. **Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի** ամբիոնը գիտական հետազոտությունների և կրթական ոլորտում համագործակցում է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների Ինստիտուտի, Ֆրանսիայի Լորենի, Իտալիայի Պադովայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոզեմանի և Սան Անտոնիոյի համալսարանների հետ:
2. **Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի** ամբիոնը գիտական հետազոտությունների ոլորտում համագործակցում է Կիլի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Պենզայի պետական Վ. Բելինսկու անվան մանկավարժական համալսարանի (Ռուսաստան), Սոլիկամսկի պետական մանկավարժական ինստիտուտի (Ռուսաստան), Սումիի պետական համալսարանի (Ուկրաինա), Բոգդան Խմելնիցկու անվան Չերկաս ազգային համալսարանի (Ուկրաինա), Մ. Տանկի անվան Բելոռուսի պետական մանկավարժական համալսարան (Բելոռուսիա), ինչպես նաև Սլովենիայի, Ավստրիայի առաջատար բուհերի հետ:
3. **Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի** ամբիոնը մեթոդական և հետազոտական ոլորտում համագործակցում է Բաթումիի Շ. Ռուստավելու անվան Պետական համալսարանի (Վրաստան), Վրացական տեխնիկական համալսարանի (Վրաստան) և Գերմանիայի արհեստական բանականության հետազոտական կենտրոնի հետ:

**Տեխնոլոգիական կրթության ամբիոնը** գիտական հետազոտությունների և կրթական ոլորտում համագործակցում է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի Կիրառական Պրոբլեմների Ինստիտուտի, Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանի «Կիևի Իգոր Սիկորսկի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ» (Ուկրաինա) և Վ.Ն. Բակուլի անվան գերկարծր նյութերի ինստիտուտի (Ուկրաինա) հետ:

Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:

1. **Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի** ամբիոնը գիտական հետազոտությունների և կրթական ոլորտում համագործակցում է Ֆրանսիայի Լորենի, Իտալիայի Պադովայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Բոզեմանի և Սան Անտոնիոյի համալսարանների հետ: ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (Աշտարակ): Ամբիոնի աշխատակիցները և ֆիզիկա մասնագիտությամբ մագիստրոսներն ու բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները (թվոր 7 ուսանող) մասնակցել են ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ «Լազեր – 2019» անցկացված գիտաժողովին:
2. **Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի** ամբիոնը գիտական հետազոտությունների ոլորտում համագործակցում է Կիլի համալսարանի (Մեծ Բրիտանիա), Ստեյվոյի անվան Մաթեմատիկական ինստիտուտի (Ռուսաստան), Պենզայի պետական Վ. Բելինսկու անվան մանկավարժական համալսարանի (Ռուսաստան), Սոլիկամսկի պետական մանկավարժական ինստիտուտի (Ռուսաստան), Սումիի պետական համալսարանի (Ուկրաինա), Բոգդան Խմելնիցկու անվան Չերկաս ազգային համալսարանի (Ուկրաինա), Մաքսիմ Տանի անվան Բելոռուսի պետական մանկավարժական համալսարան (Բելոռուսիա), ինչպես նաև Սլովենիայի, Ավստրիայի, Վրաստանի առաջատար բուհերի հետ: Ամբիոնի աշխատակիցները (Յ.Միքայելյան, Ա. Ենոբյան, Ա. Մկրտչյան) մասնակցել են համատեղ միջազգային գիտաժողովներին: Լ.Գ. Ղուլդազարյանը, Գ.Ռ. Ղուլդազարյանը և Լ.Գ. Արաքաջյանը մասնակցել են Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում անցկացվող միջազգային գիտաժողովներին:
3. **Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի** ամբիոնը մեթոդական և հետազոտական ոլորտում համագործակցում է Բաթումիի Շ. Ռուստավելու անվան Պետական համալսարանի (Վրաստան), Վրացական տեխնիկական համալսարանի (Վրաստան) և Գերմանիայի արհեստական բանականության հետազոտական կենտրոնի հետ:
4. **Տեխնոլոգիական կրթության ամբիոնը** կրթության ամբիոնը գիտական հետազոտությունների և կրթական ոլորտում համագործակցում է ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի (ՖԿՊԻ) «Նյութագիտության» լաբորատորիայի հետ, ՀԱՊՀ -ի «Մետալուրգիայի և նյութագիտության» գիտական լաբորատորիայի հետ, տեղեկատվական տեխնոլոգիաների Նաիրի կոնսորցիումի հետ, Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանի «Կիևի Իգոր Սիկորսկի անվան պոլիտեխնիկական ինստիտուտ» (Ուկրաինա), Վ.Ն. Բակուլի անվան գերկարծր նյութերի ինստիտուտի (Ուկրաինա) հետ:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի աշխատակիցները (Լ. Ղուլղազարյան, Գ. Ղուլղազարյան, Լ. Արարաջյան, Յ.Միքայելյան, Ա. Ենոքյան, Ա. Մկրտչյան, Է. Կոկանյան, Ն. Մխիթարյան, Ն. Օրդյանը) մասնակցել են համատեղ միջազգային գիտաժողովներին, համատեղ հեղինակությամբ հրատարակել են գիտական հոդվածներ (Է. Կոկանյան, Ն. Մխիթարյան և Ա. Դանելյան, Ա. Իշխանյան և Գ. Դեմիրխանյան, Լ. Ղուլղազարյան և Գ. Ղուլղազարյան): Համապատասխան հղումները բերված են վերբերված աղյուսակներում: Ըստ որում, կատարվող հետազոտական աշխատանքները, որոնց մի մասը իրականացվում է միջազգային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, շարունակական են:

**X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

Ֆակուլտետում գործող ուսուցման որակի մշտադիրկման հանձնախումբ, որի մեջ ներգրաված են ուսուցման որակի ամբիոնների պատասխանատուները, իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- Ըստ հաստատված ժամանակացույցի հրավիրվել են նիստեր, որտեղ քննարկվել են ուսուցման որակի հետ առնչվող հարցեր՝ առցանց դասավանդման մեթոդների կիրառման աստիճանը, դասավանդման ընթացքում ծրագրային միջոցների օգտագործման ինտենսիվությունը, ուսանողների և դասախոսների ներգրավվածության աստիճանը Google classroom հարթակում և այլն:
- Ֆակուլտետում շրջանառության մեջ է դրված մագիստրոսների աշխատանքային պլանը, որտեղ կի-սամյակի կտրվածքով պլանավորվում է յուրաքանչյուր մագիստրանտի հետազոտական և ուսումնա-կան աշխատանքի փուլերը, նշվում են կատարման ու հաշվետվության ժամկետները:
- Յուրաքանչյուր մագիստրանտ կիսամյակի ավարտին ատեստավորվում է համապատասխան ամբիոն-նի նիստում, ինչը վավերացվում է ֆակուլտետի խորհրդի նիստի հաստատմամբ: Ատեստավորում չանցած մագիստրանտը ներկայացվում է հեռացման: Սա նպաստում է դրական վերջնարդյունքների ստացմանը և, փաստորեն, արգելակում հանպատրաստի թեզերի պաշտպանությունը

Ֆակուլտետում մշակվել և կիրառվում է մագիստրոսական թեզերի գրախոսման ձևաչափ, ինչը ապահովում է գրախոսությունների պատշաճ մակարդակը:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

Ֆակուլտետում գործող որակի մշտադիրկման հանձնախմբի կազմում, որը վավերացվում է ռեկտորի հրամանով, ներգրավված են ֆակուլտետի ղեկանը, նրա ղեղակալները, յուրաքանչյուր ամբիոնից մեկական ներկայացուցիչ (դասախոս), ինչպես նաև ուսանողական խորհրդի առաջարկով յուրաքանչյուր մասնագիտությունը ներկայացնող մեկական ուսանող:

Բացի այդ, ամփոփիչ ավարտական քննական հանձնաշողովների, ինչպես նաև պրակտիկայի պաշտպանության հանձնաժողովներում ներգրավված են հանրակրթական հաստատությունների ներկայացուցիչներ՝ դպրոցների տնօրեններ և ուսուցիչներ:

<b>Ֆակուլտետի ինքնագնահատում (SWOT) վերլուծություն</b>	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Գիտամանկավարժական դասախոսական ներուժի առկայությունը,</li> <li>• Դասավանդման գործընթացում արդի տեխնիկական միջոցների կիրառումը,</li> <li>• Անհրաժեշտ ուսումնական սարգավորումներով հագեցված ուսումնական լաբորատորիաների առկայությունը,</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բակալավրիատի մասնագիտական ծրագրերի ցածր գրավչություն,</li> <li>• Հետազոտական աշխատանքներում ընդգրկված ուսանողների նվազ թվաքանակը,</li> <li>• Մասնագիտական իրազեկման աշխատանքների ցածր արդյունավետություն,</li> <li>• Բակալավրիատի ուսանողների՝ հատկապես</li> </ul>

<ul style="list-style-type: none"> <li>• <i>Գիտական լաբորատորիաների առկայությունը,</i></li> <li>• <i>Ակտիվ համագործակցությունը այլ (այդ թվում արտասահմանյան) գիտական և կրթական հաստատությունների հետ,</i></li> <li>• <i>Գիտական հոդվածների հրատարակում բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում</i></li> </ul>	<p><i>Ֆիզիկա և տեխնոլոգիա և ձեռնարկչություն մասնագիտությունների թվաքանակի սակավություն,</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• <i>Դասախոսական կազմի սերնդափոխության ցածր տեմպերը:</i></li> </ul>
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Վտանգներ</i></p>
<ul style="list-style-type: none"> <li>• <i>Դրամաշնորհների մրցույթներին ավելի ակտիվ մասնակցություն</i></li> <li>• <i>Դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերին ինտենսիվ մասնակցություն,</i></li> <li>• <i>Դպրոցների հետ համագործակցության բովանդակության խորացում</i></li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• <i>Բնագիտամաթեմատիկական առարկաների հանդեպ հասարակական պահանջարկի նվազում,</i></li> <li>• <i>Դասախոսական աշխատանքի հանդեպ երիտասարդ մասնագետների մոտիվացիայի նվազումը:</i></li> </ul>